# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-19/8-2

ք. Երևան 29.07. 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ.Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և "Պատրոն ՌՄ" ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Կ. Սուքիասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 7483530 (յոթ միլիոն չորս հարյուր ութսուներեք հազար հինգ հարյուր երեսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդը մատակարարվելիք ապրանքի խմբաքանակի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պայրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը

տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային

պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական բաժինը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Պատրոն ՌՄ» ՍՊԸ |
| Բագրևանդի 5 | ք. Երևան,Վարդանանց 18/2 |
| 010294545 | ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Հ/Հ 1660000446270100 |
| 900011144079 | ՀՎՀՀ 00861057 |
| 02522157 | տնօրեն |
| Մ.ՂԱՄԲԱՐՅԱՆ | Կ.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՅՍՊՁԲ-19/8-2 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/հ | Գնման առարկան | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|
| 1 | Քարտրիջներ գունավոր HP CLJ 1025 լազերային տպիչի | HP CLJ 1025 գունավոր լազերային տպիչի քարտրիջների լրակազմ է, 1 հատի մեջ՝ 4 գույն /CMYK/ (CE310A, CE311A, CE312A, CE313A համարժեք), յուրաքանչյուր գույնից մեկական: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից: |
| 2 | Քարտրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի | HP CLJ 1515 գունավոր լազերային տպիչի քարտրիջների լրակազմ է, 1 հատի մեջ՝ 4 գույն /CMYK/ (CB540A, CB541A, CB542A, CB543A համարժեք), յուրաքանչյուր գույնից մեկական: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից: |
| 3 | Տոներ-քարտրիջներ Canon LBP 6030W շարքի տպիչ սարքերի | Canon LBP 6030W շարքի տպիչ սարքի տոներ-քարտրիջ՝ Canon Cartridje 725 համարժեք: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից: |
| 4 | Քարտրիջներ HP DJ 510 պլոտեր սարքի | HP DJ 510 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջների լրակազմ է, 1 հատի մեջ՝ 4 գույն /CMYK/. HP 82 (CH565A), HP 82 (C4911A), HP 82 (C4912A), HP 82 (C4913A), յուրաքանչյուր գույնից մեկական: Յուրաքանչյուրը՝ առնվազն 69 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: Ապրանքների հետ կներկայացվի արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից: |
| 5 | Գլխիկներ HP DJ 510 պլոտեր սարքի | HP DJ 510 մակնիշի պլոտեր սարքի տպող գլխիկների լրակազմ է, 1 հատի մեջ՝ 4 գույն /CMYK/. C4810A-HP11, C4811A-HP11, C4812A-HP11, C4813A-HP11, յուրաքանչյուր գույնից՝ մեկական: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: Ապրանքների հետ կներկայացվի արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից: |
| 6 | Քարտրիջներ HP DJ T520 պլոտեր սարքի | HP DJ T520 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջների լրակազմ է, 1 հատի մեջ՝ 4 գույն /CMYK/, որոնցից առնվազն. սև (CZ133A HP 711) - 80 մլ, կապույտ (CZ130A HP 711) - 29 մլ, կարմիր (CZ131A HP 711) - 29 մլ, դեղին (CZ132A HP 711) - 29 մլ, յուրաքանչյուր գույնից՝ մեկական: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: Ապրանքների հետ կներկայացվի արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի |

| | | |
|---|---|---|
| | | Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից: |
| 7 | Գլխիկներ HP DJ T520 պլոտեր սարքի | HP DJ T520 մակնիշի պլոտեր սարքի տպող գլխիկների լրակազմ, 1 հատի մեջ՝ ներկառուցված 4 գույն /CMYK/. (C1Q10A HP 711): Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: Ապրանքների հետ կներկայացվի արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից: |
| 8 | Քարտրիջներ HP T790 պլոտեր սարքի | HP T790 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջների լրակազմ է, 1 հատի մեջ՝ 6 գույն. HP 72 (C9371A), HP 72 (C9372A), HP 72 (C49373A), HP 72 (C9374A), HP 72 (C9403A), HP 72 (C9370A), յուրաքանչյուր գույնից՝ մեկական: Յուրաքանչյուրը՝ առնվազն 130 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: Ապրանքների հետ կներկայացվի արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից: |
| 9 | Գլխիկներ HP T790 պլոտեր սարքի | HP T790 մակնիշի պլոտեր սարքի տպող գլխիկների լրակազմ, 1 հատի մեջ՝ 3 գլխիկ. C9383A, C9380A, C9384A: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: Ապրանքների հետ կներկայացվի արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից: |
| 10 | Քարտրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի | HP DJ Z6600 մակնիշի բաներային պլոտեր սարքի քարտրիջների լրակազմ է, 1 հատի մեջ՝ 6 գույն. HP 773C (C1Q37A), HP 773C (C1Q39A), HP 773C (C1Q40A), HP 773C (C1Q42A), HP 773C (C1Q43A), HP 773C (C1Q44A), յուրաքանչյուր գույնից՝ մեկական: Յուրաքանչյուրը՝ առնվազն 775 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: Ապրանքների հետ կներկայացվի արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված |
| 11 | Գլխիկներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի | HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի տպող գլխիկների լրակազմ, 1 հատի մեջ՝ 3 գլխիկ. CE018A HP 771 Magenta/Yellow, CE020A HP 771 Photo Black/Light Gray, C1Q20A HP 773 Matte Black/Cyan: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: Ապրանքների հետ կներկայացվի արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից: |
| 12 | Քարտրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի | Xerox Phaser 6000 գունավոր լազերային տպիչի քարտրիջների լրակազմ է, 1 հատի մեջ՝ 4 գույն /CMYK/ (106R01631, 106R01632, 106R01633, 106R01634 համարժեք), |

յուրաքանչյուր գույնից մեկական: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>Բագրևանդի 5<br>010294545<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>900011144079<br>02522157 | «Պատրոն ՌՄ» ՍՊԸ<br>ք. Երևան,Վարդանանց 18/2<br>ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ<br>Հ/Հ 1660000446270100<br>ՀՎՀՀ 00861057<br>տնօրեն |
| Մ.ՂԱՄԲԱՐՅԱՆ | Կ.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ |

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Միասնական անվանացանկի CPV կոդը | Անվանումը | Չ/մ | Քանակը | Միավորի գին | Ընդհանուր գումար | Մատակարարումը 2019թ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | 3-րդ եռամսյակ |
| 1 | 30121500/26 | Քարտրիջներ գունավոր HP CLJ 1025 լազերային տպիչի | հատ | 5 | 10584 | 52920 | 5 |
| 2 | 30121500/27 | Քարտրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի | հատ | 1 | 16170 | 16170 | 1 |
| 3 | 30121500/29 | Տոներ-քարտրիջներ Canon LBP 6030W շարքի տպիչ սարքերի | հատ | 8 | 2130 | 17040 | 8 |
| 4 | 30121500/31 | Քարտրիջներ HP DJ 510 պլոտեր սարքի | հատ | 12 | 114900 | 1378800 | 12 |
| 5 | 30121500/32 | Գլխիկներ HP DJ 510 պլոտեր սարքի | հատ | 6 | 124980 | 749880 | 6 |
| 6 | 30121500/33 | Քարտրիջներ HP DJ T520 պլոտեր սարքի | հատ | 10 | 97380 | 973800 | 10 |
| 7 | 30121500/34 | Գլխիկներ HP DJ T520 պլոտեր սարքի | հատ | 4 | 119880 | 479520 | 4 |
| 8 | 30197646/35 | Քարտրիջներ HP T790 պլոտեր սարքի | հատ | 2 | 299700 | 599400 | 2 |
| 9 | 30192730/36 | Գլխիկներ HP T790 պլոտեր սարքի | հատ | 2 | 299700 | 599400 | 2 |
| 10 | 30192730/37 | Քարտրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի | հատ | 2 | 919800 | 1839600 | 2 |
| 11 | 30192730/38 | Գլխիկներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի | հատ | 2 | 373800 | 747600 | 2 |
| 12 | 30192730/42 | Քարտրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի | հատ | 4 | 7350 | 29400 | 4 |

**Ծանոթություն`** - ապրանքները պետք է մատակարարվեն Երևան, Բագրևանդի-5 հասցեով գտնվող պահեստ::

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
Բագրևանդի 5
010294545
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900011144079
02522157

Մ.ՂԱՄԲԱՐՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան,Վարդանանց 18/2
ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057
տնօրեն

Կ.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

*Հավելված N 2*
*N ԳՀԱՊՁԲ-19/8-2 պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Գնման ենթակա ապրանքների անվանումը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Քարտրիջներ գունավոր HP CLJ 1025 լազերային տպիչի | 52920 | 52920 | 52920 | 52920 | 52920 | 52920 |
| 2 | Քարտրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի | 16170 | 16170 | 16170 | 16170 | 16170 | 16170 |
| 3 | Տոներ-քարտրիջներ Canon LBP 6030W շարքի տպիչ սարքերի | 17040 | 17040 | 17040 | 17040 | 17040 | 17040 |
| 4 | Քարտրիջներ HP DJ 510 պլոտեր սարքի | 1378800 | 1378800 | 1378800 | 1378800 | 1378800 | 1378800 |
| 5 | Գլխիկներ HP DJ 510 պլոտեր սարքի | 749880 | 749880 | 749880 | 749880 | 749880 | 749880 |
| 6 | Քարտրիջներ HP DJ T520 պլոտեր սարքի | 973800 | 973800 | 973800 | 973800 | 973800 | 973800 |
| 7 | Գլխիկներ HP DJ T520 պլոտեր սարքի | 479520 | 479520 | 479520 | 479520 | 479520 | 479520 |
| 8 | Քարտրիջներ HP T790 պլոտեր սարքի | 599400 | 599400 | 599400 | 599400 | 599400 | 599400 |
| 9 | Գլխիկներ HP T790 պլոտեր սարքի | 599400 | 599400 | 599400 | 599400 | 599400 | 599400 |
| 10 | Քարտրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի | 1839600 | 1839600 | 1839600 | 1839600 | 1839600 | 1839600 |
| 11 | Գլխիկներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի | 747600 | 747600 | 747600 | 747600 | 747600 | 747600 |
| 12 | Քարտրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի | 29400 | 29400 | 29400 | 29400 | 29400 | 29400 |

**Ծանոթություն՝** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Պատրոն ՈՄ» ՍՊԸ |
| Բագրևանդի 5 | ք. Երևան,Վարդանանց 18/2 |
| 010294545 | ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Հ/Հ 1660000446270100 |
| 900011144079 | ՀՎՀՀ 00861057 |
| 02522157 | տնօրեն |
| Մ.ՂԱՄԲԱՐՅԱՆ | Կ.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ |

*Հավելված N 3*
*N ԳՀԱՊՁԲ-19/8-2 պայմանագրի*

Պայմանագրի կողմ

____________________________

____________________________

գտնվելու վայրը ______________
հհ __________________________
հվհհ ________________________

Պատվիրատու

____________________________

____________________________

գտնվելու վայրը _________________
հհ_____________________________
հվհհ___________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«   » «          » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

____________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «      » «                    » 20     թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

____________________________
ստորագրություն

____________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

____________________________
ստորագրություն

____________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված N 3.1*
*N ԳՀԱՊՁԲ-19/8-2 պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________ (Գնորդի անվանումը) -ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________ (Վաճառողի անվանումը) (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ______________ (պայմանագրի կնքման ամսաթիվը) -ին կնքված N ______________ (պայմանագրի համարը) պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն